



ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ խորհրդի
« 14 » օգոստոսի 2025թ. թիվ 48 որոշմամբ

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ	5
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	5
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ	6
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԵՆԹԱՉԱՓԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ.....	6
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	7
ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	7
ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	10
ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ	11
ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12
ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ	14
ԲԱԺԻՆ 13. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ	17
ԲԱԺԻՆ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ.....	18
ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	20
ԲԱԺԻՆ 16. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	20

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Գնահատողի և փորձագետի մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Գնահատողի կամ փորձագետի մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են գնահատողի կամ փորձագետի մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն սույն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով սահմանված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել, ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5. Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական ինտերնետային կայքում:

1.6. Կանոնների համաձայն Ապահովագրողը Ապահովադրի հետ կնքում է Պայմանագրեր՝ գնահատողի կամ փորձագետի (Ապահովագրված անձի) մասնագիտական պատասխանատվությունն ապահովագրելու նպատակով:

1.7. Պայմանագրի փոփոխությունները կամ լրացումները ձևակերպվում են Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ և գրավոր տեսքով: Պայմանագրի փոփոխման կամ լրացման դեպքում կողմերի պարտականությունները համարվում են փոփոխված Պայմանագրի փոփոխման կամ լրացման մասին գրավոր համաձայնության կնքման պահից:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները, որոնց իմաստը չի սահմանված Կանոններում, պարզաբանվում են կիրառելի օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերում կիրառվող դրանց իմաստով, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ դրանց տառացի և բառացի նշանակությամբ:

2.2. Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են.

2.2.1. *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որը որոշակի վճարի (ապահովագրավճար) դիմաց իր վրա է վերցնում Ապահովադրի պատասխանատվության ռիսկը (նյութական հետևանքները) և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Շահառուին) հատուցում է վնասը՝ սահմանված կարգով ապահովագրական հատուցում վճարելու միջոցով:

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

2.2.2. *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած իրավաբանական անձ կամ գործունակ ֆիզիկական անձ.

2.2.3. *Պայմանագիր*՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև առաջացող հարաբերությունները կարգավորող և նրանց միջև կնքվող գրավոր համաձայնություն, ըստ որի սահմանված ժամկետում Ապահովադրի կողմից վճարվող ապահովագրավճարների դիմաց Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում կատարել ապահովագրական հատուցում հոգուտ այն կողմի (Շահառուի), որի առջև դատարանի կողմից կայացված և ուժի մեջ մտած վճռի կամ այլ իրավասու մարմնի որոշման հիման վրա Ապահովագրված անձը կրում է համապատասխան պատասխանատվություն: Սույն Կանոններում Պայմանագիրը նույնացվում է ապահովագրության վկայագրի հետ.

2.2.4. *Ապահովագրված անձ*՝ իրավական ակտերով սահմանված կարգով գնահատման և/կամ փորձագիտական գործունեություն իրականացնող անձ, որի մասնագիտական պատասխանատվությունը ապահովագրված է Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրում և որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

Կանոնների համաձայն այդպիսի անձ կարող է հանդիսանալ Կանոնների 2.2.15 և/կամ 2.2.17 կետերում նշված անձը.

2.2.5. *Շահառու*՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, որին կարող է վնաս պատճառվել և որի առջև Ապահովագրված անձը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի: Կանոնների համաձայն Շահառու կարող են հանդես գալ հետևյալ անձինք՝

- գնահատողի կամ փորձագետի ծառայությունից օգտվողները,
- գնահատվող կամ փորձաքննվող օբյեկտի սեփականատերը,
- անձինք, որոնք սեփականատիրոջ համաձայնությամբ ցանկություն ունեն անշարժ գույքի հետ կապված կնքել պայմանագիր,
- տեղական ինքնակառավարման և պետական մարմինները,
- այլ անձինք (երրորդ անձինք), որոնց կարող է պատճառվել վնաս գնահատողի կամ փորձագետի մասնագիտական գործունեության ընթացքում (օրինակ, գնահատվող օբյեկտի գրավառուներ՝ բանկեր, վարկային կազմակերպություններ).

2.2.6. *Ապահովագրական գումար* կամ *ապահովագրական ծածկույթ*՝ Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված՝ դրամական արտահայտությամբ գումար, որի շրջանակներում Ապահովագրողը կրում է պատասխանատվություն.

2.2.7. *Ապահովագրական գումարի ենթաչափեր*՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում մեկ ապահովագրական պատահարի համար սահմանվող ենթաչափեր (հատուցման ենթակա առավելագույն չափեր).

2.2.8. *Ապահովագրավճար*՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.

2.2.9. *Ապահովագրական սակագին*՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ, որը որոշվում է Ապահովագրողի կողմից.

2.2.10. *Ապահովագրական դեպք* կամ *ապահովագրական պատահար*՝ Պայմանագրի գործողության ընթացքում գնահատողի կամ փորձագետի (Ապահովագրված անձի) կողմից իր հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորության՝ այն է պատշաճ կերպով

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

գրավոր ձևակերպված պայմանագրով ստանձնած որևէ շարժական կամ անշարժ գույք գնահատելու կամ որևէ պատահարի առաջացման պատճառների փորձաքննության և/կամ առաջացրած վնասների գնահատման գործողության իրականացում, որն առաջացրել է Ապահովագրված անձի հաճախորդների (Շահառուների) Կանոններով նախատեսված վնասներ և որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հիմք է հանդիսանում հաճախորդի կողմից Ապահովագրված անձի նկատմամբ վնասի փոխհատուցման պահանջի համար: Ապահովագրական պատահարը որպես այդպիսին ճանաչվում է դատարանի կողմից հաստատված և օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ, որի առկայությամբ ծագում է Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտականությունը:

2.2.11. *Չհատուցվող գումար՝* Ապահովագրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

2.2.12. *Պայմանական չհատուցվող գումար՝* Պայմանագրով սահմանված գումար, որի դեպքում Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

2.2.13. *Ոչ պայմանական չհատուցվող գումար՝* Պայմանագրով սահմանված գումար, որի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

2.2.14. *Ապահովագրական հատուցում՝* ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովագրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է:

2.2.15. *Փորձագետ՝* ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն ունի ապահովագրական պատահարների առաջացման պատճառների փորձաքննություն և/կամ առաջացրած վնասների գնահատում իրականացնելու իրավունք:

2.2.16. *Փորձագիտական գործունեություն՝* փորձագետի կողմից իրականացվող գործունեություն, որը կապված է պատահարների առաջացման պատճառների փորձաքննության և/կամ առաջացրած վնասների գնահատման հետ:

2.2.17. *Գնահատող՝* ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն զբաղվում է գնահատման գործունեությամբ:

2.2.18. *Գնահատման գործունեություն՝* գնահատողի կողմից իրականացվող գործունեություն, որը կապված է գնահատվող օբյեկտի շուկայական և այլ արժեքի որոշման հետ:

2.2.19. *Գնահատվող օբյեկտներ՝*

2.2.19.1" առանձին նյութական օբյեկտներ (իրեր),

2.2.19.2" անձին պատկանող գույք, այդ թվում գույքի որոշակի տեսակներ (անշարժ և շարժական, այդ թվում կազմակերպություն),

2.2.19.3" սեփականության և այլ գույքային իրավունք՝ գույքի և դրա կազմից դուրս առանձին մասի նկատմամբ,

2.2.19.4" պահանջի իրավունք և պարտականություններ (պարտքեր),

2.2.19.5" աշխատանք, ծառայություններ կամ տեղեկատվություն,

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

2.2.19.6" քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ .

2.2.20. *Գնահատվող օբյեկտի արժեքը* կախված է՝

2.2.20.1" օբյեկտի շուկայական արժեքից,

2.2.20.2" օբյեկտի հաշվեկշռային արժեքից,

2.2.20.3" օբյեկտի տնտեսական արժեքից,

2.2.20.4" աշխատող կազմակերպության արժեքից,

2.2.20.5" կազմակերպության վարկանիշային արժեքից (անվանումից),

2.2.20.6" օբյեկտի մաշվածության արժեքից,

2.2.20.7" օբյեկտի ապահովագրական արժեքից,

2.2.20.8" օբյեկտի ընթացիկ արժեքից,

2.2.20.9" օբյեկտի վերականգնման արժեքից:

2.2.21. *Բյուրո*՝ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն, որը պետության կողմից օրենքով ճանաչված ինքնակարգավորվող կազմակերպություն է:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

3.1. Կանոնների համաձայն Ապահովադիրը պետք է ունենա փորձաքննություն կամ գնահատման գործունեություն իրականացնելու համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան մարմինների կողմից տրված լիցենզիա (արտոնագիր):

3.2. Պայմանագիրը կնքվում է այն գնահատողի կամ փորձագետի հետ, որին տրված լիցենզիայի (իրավունքը հաստատող փաստաթղթի) գործողության ժամկետը լրացած չէ և չի լրանում մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

3.3. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրում ապահովագրվում է Ապահովագրված անձի պատասխանատվության ռիսկը: Եթե Պայմանագրում Ապահովագրված անձ նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովադրի պատասխանատվության ռիսկը (նման դեպքում Ապահովագրված անձ է համարվում Ապահովադիրը): Պայմանագրում ռիսկն ապահովագրված է համարվում հոգուտ այն կողմի՝ Շահառուի, որի առջև Պայմանագրի պայմաններով Ապահովագրված անձը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի, եթե անգամ Պայմանագիրը կնքվել է հոգուտ այլ անձի կամ դրանում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

4.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող Ապահովադրի գույքային շահերը՝ կապված գնահատման կամ փորձագիտական գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուի գույքային շահերին հասցված վնասի հետ: ԱՊՊԱ ոլորտում գործող փորձագետների դեպքում՝ այն ներառում է նաև Բյուրոյի կանոններով, ինչպես նաև փորձագետի հետ ԱՊՊԱ ոլորտում կնքված համաձայնագրով վերջինի գործունեությանը ներկայացված պահանջների չպահպանման հետևանքով փորձաքննության պատվիրատուին կամ երրորդ անձանց պատճառված վնասները:

4.2. Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը առաջանում է, եթե Շահառուի գույքային շահերին հասցված վնասն ուղիղ պատճառահետևանքային կապ ունի գնահատողի կամ փորձագետի գործունեության հետ, և

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

գույքի գնահատման կամ պատճառների փորձաքննության արդյունքում Շահառուի գույքային շահերին հասցվել է վնաս Պայմանագրի գործողության ժամանակահատվածում:

4.3. Ընդ որում Կանոնների 4.2 կետում նշված պայմաններում հատուցվում է Շահառուին պատճառված այն վնասը, որը ծագել է գնահատողի կամ փորձագետի կողմից ոչ ճիշտ, ոչ օբյեկտիվ կամ ոչ լիարժեք (թերի) եզրակացության տրամադրման արդյունքում, որը գնահատողի կամ փորձագետի կանխամտածված և դիտավորյալ գործունեության արդյունք է և այդ վնասը հատուցելու պարտավորության հանգամանքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատական վճռով (որոշմամբ) կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

5.1. Ապահովագրական ռիսկ է համարվում Ապահովագրված անձի կողմից գնահատման կամ փորձագիտական գործունեություն իրականացնելու հետ կապված Շահառուի գույքային շահերին հասցված հավանական վնասը, որի ի հայտ գալու հետ կապված իրականացվում է Կանոններով նախատեսված ապահովագրությունը:

5.2. Կանոններով ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովագրված անձի կողմից գնահատման կամ փորձագիտական գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուին հասցված վնասի համար պատասխանատվություն առաջացնող փաստը, որը հաստատված է օրինական ուժի մեջ մտած դատական վճռով (որոշմամբ) կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ և որի վրա հասնելու հետևանքով սկիզբ է առնում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը: ԱՊՊԱ ոլորտում գործող փորձագետների դեպքում ապահովագրական պատահար համարվում են նաև Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի «ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոններով նախատեսված դեպքերը և հատուցման ենթակա են այդ կանոններով նախատեսված վնասները:

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ
ԵՆԹԱԶԱՓԵՐ, ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ**

6.1. Ապահովագրական գումարը որոշվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.2. Պայմանագրով կարող են նշվել մեկ ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթաչափեր: Ընդ որում, եթե այդպիսի դեպքերում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացել են մեկից ավելի վնասներ, ապա դրանք միավորվում և դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահարի հետևանք: Եթե Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի ենթաչափը չի բավարարում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած մի քանի վնասների հատուցման համար, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցումը յուրաքանչյուր վնասի գծով իրականացնում է վնասի մի մասի չափով՝ ընդհանուր վնասների մեջ տվյալ վնասի համամասնությամբ՝ մասհանելով նաև Պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը: Պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կարող են սահմանվել ինչպես գնահատման ենթակա առանձին օբյեկտների գծով, այնպես էլ մեկ ապահովագրական պատահարի համար:

6.3. Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը Ապահովագրողի կողմից իրականացված ապահովագրական հատուցմամբ պայմանավորված նվազման դեպքում

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

կարող է Ապահովադրի ցանկությամբ վերականգնվել կամ լրացվել՝ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմամբ: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

6.4. Պայմանագրում կողմերը կարող են որոշել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումարի չափեր:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ,
ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

7.1. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, Ապահովադրի կողմից ընտրված ապահովագրական ռիսկերի ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և ապահովագրությանն ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

7.2. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ, սահմանվում Կանոններով և Պայմանագրով:

7.3. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ ապահովագրության ժամկետի համար, կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

7.4. Ապահովագրական գումարի լրացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է լրացուցիչ ապահովագրավճարը վճարել միանվագ կարգով: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

7.5. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից վճարվում են անկանխիկ՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.6. Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը:

7.7. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

7.8. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

7.9. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

**ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

8.1. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

8.2. Պայմանագիրը կարող է կնքվել միայն գնահատման և/կամ փորձագիտական գործունեություն իրականացնելու լիցենզիայի (իրավունքի) գործողության ժամանակահատվածի համար:

8.3. Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրն Ապահովագրողին պետք է ներկայացնի՝

8.3.1" գրավոր դիմում, որտեղ պետք է ներառված լինի տեղեկատվություն՝

8.3.1.1. ապահովագրական ռիսկերի վերաբերյալ,

8.3.1.2. ապահովագրական գումարի չափի և ապահովագրական գումարի ենթաչափերի վերաբերյալ,

8.3.1.3. ապահովագրության ժամկետի վերաբերյալ,

8.3.1.4. կնքվող գնահատման և/կամ փորձաքննության պայմանագրերի քանակի, դրանց գումարային արժեքի, գնահատման կամ փորձաքննության օբյեկտի (ապահովագրության ժամկետի ընթացքում) վերաբերյալ, եթե դրանք նախապես հայտնի են Ապահովադիրին (Ապահովագրված անձին),

8.3.1.5. Ապահովադրի (Ապահովագրված անձի) դեմ ներկայացված հայցերը և դրանց վերջնական լուծումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

8.3.1.6. գույքային հայցապահանջների վերաբերյալ, որում անհրաժեշտ է նշել ընդհանուր վնասների ծավալը՝ կապված վերջին 3 տարիների ընթացքում գնահատման կամ փորձագիտական գործունեության հետևանքով առաջացած վնասի հատուցման համար կատարված վճարումների կամ վճարման ենթակա գումարների հետ .

8.3.2" իրավաբանական անձի (անհատ ձեռներեցի) պետական ռեգիստրի վկայագրի պատճենը,

8.3.3" լիցենզիայի, կամ գնահատման և/կամ փորձաքննության իրականացման իրավունքը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

8.3.4" գնահատման և/կամ փորձաքննության պայմանագրի պատճենը (այն Պայմանագրի համար, որում ապահովագրության օբյեկտ է համարվում առանձին գնահատման կամ փորձաքննության պայմանագրով նախատեսված ռիսկը) կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) տիպային գնահատման և/կամ փորձաքննության պայմանագիրը (այն Պայմանագրերի համար, որտեղ ապահովագրության օբյեկտ են համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում կնքված մի շարք գնահատման և/կամ փորձաքննության պայմանագրեր),

8.3.5" Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցների ցուցակը (համապատասխան կրթությամբ ոչ պակաս, քան մեկ մասնագիտացված գնահատող կամ փորձագետ, որի համար Ապահովադրի (Ապահովագրված անձի) կազմակերպությունը հանդիսանում է մշտական աշխատատեղ), որտեղ նշված է՝

8.3.5.1. անուն, ազգանուն, հայրանունը,

8.3.5.2. լիցենզիայի կամ այլ փաստաթղթի համարը և տրման ամսաթիվը, գործողության ժամկետը, որը հավաստում է գնահատման կամ փորձագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքը,

8.3.5.3. պաշտոնը,

8.3.5.4. գնահատման կամ փորձագիտական գործունեությամբ զբաղվելու ստաժը:

8.4. Դիմումի մեջ նշված տվյալների իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Դիմումի մեջ Ապահովադրի կողմից ոչ ճիշտ տվյալների շարադրման

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

դեպքում, Ապահովագրողը, ապահովագրական դեպքի վրա հասնելու պարագայում, ազատվում է ապահովագրական հատուցումը վճարելու պարտավորության կատարումից:

8.5. Եթե Կանոնների 8.3 կետում նշված տեղեկատվությունը ներառվում է Պայմանագրում, ապա Ապահովագրողն ապահովագրությունը կարող է իրականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի) բանավոր դիմումի հիման վրա:

8.6. Ապահովագրողը, ելնելով որոշակի հանգամանքներից, կարող է նաև կրճատել կամ մեծացնել իրեն ներկայացվող տեղեկությունների ցանկը և համապատասխանաբար Ապահովադրին տրամադրել Պայմանագիր՝ Կանոնների 8.3 կետում նշված տեղեկատվությունից պակաս կամ ավել տեղեկատվության ներկայացմամբ:

8.7. Ապահովագրողն իրավունք ունի մերժել Պայմանագրի կնքումը, եթե՝

8.7.1" Պայմանագրի կնքման պահին գնահատողը կամ փորձագետը չունի, համապատասխանաբար, գնահատում կամ փորձաքննություն իրականացնելու համար համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված լիցենզիա (իրավունք),

8.7.2" գնահատողի կամ փորձագետի լիցենզիայի (իրավունքի) գործողության ժամկետը լրանում է մինչև այն պահը, երբ Ապահովադիրը հավակնում է ստանալ Պայմանագիրը,

8.7.3" գնահատողը կամ փորձագետը կնքել է Ապահովագրողի գույքի գնահատման կամ պատահարի փորձաքննության վերաբերյալ պայմանագիր,

8.7.4" գնահատողը կամ փորձագետը չի ներկայացրել Ապահովագրողի պահանջով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ,

8.7.5" գնահատողը կամ փորձագետն իր ծառայություններ սպառողի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով հանդիսանում է հիմնադիր, մասնակից, սեփականատեր, բաժնետեր, կրեդիտոր, պաշտոնատար անձ, որևէ պայմանագրով պատվիրատու կամ ծառայություններ սպառող կամ հանդիսանում է հիմնադիր, սեփականատեր, բաժնետեր, կրեդիտոր կամ գնահատողի/փորձագետի Ապահովագրող,

8.7.6" գնահատողը կամ փորձագետը գույքային շահ ունի գնահատվող օբյեկտի կամ փորձաքննվող պատահարի նկատմամբ,

8.7.7" գնահատողը կամ փորձագետն ակնկալվող Պայմանագրից բացի ունի գույքային կամ պարտավորության իրավունք գնահատվող/փորձաքննվող օբյեկտի նկատմամբ,

8.7.8" գնահատողը կամ փորձագետը հանդիսանում է ծառայություններ սպառողի հետ փոխկապակցված անձ:

8.8. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի և Ապահովագրողի կողմից համաձայնեցված ցանկացած կամ որոշակի աշխատանքների կատարման ժամկետով: Պայմանագիրը կարող է կնքվել մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

8.9. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Պայմանագրի կորցնելու դեպքում Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա տրվում է Պայմանագրի կրկնօրինակը, որից հետո կորցրած Պայմանագիրը համարվում է անվավեր:

8.10. Կրկնօրինակը կորցնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում մյուս կրկնօրինակների տրամադրման համար Ապահովագրողն Ապահովադրից կարող է գանձել կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար վճար:

8.11. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբն ու վերջը նշվում է Պայմանագրում: Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ համարվող ամսաթվի 00:00 ժամից մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջ համարվող ամսաթվի 24:00 ժամը:

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

8.12. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.13. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար կարող է սահմանել լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր կամ բանավոր ծանուցելով Ապահովադիրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

8.14. Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադիրին այդ մասին ծանուցելու: Այս դեպքում Ապահովադիրի կողմից նախապես Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

8.15. Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված Ապահովագրավճարի չափը կամ ընդհանրապես հրաժարվել վճարել ապահովագրական հատուցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

8.16. Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23:59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23:59 ժամը:

ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

9.1. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է Ապահովադիրից (Շահառուից) պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար: Եթե Ապահովադիրը (Շահառուն) դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություններ մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու Պայմանագիրը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

9.2. Ապահովադիրի (Շահառուի) կողմից Կանոնների 9.1 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում:

9.3. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անմիջապես հայտնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած էական իրադարձությունների փոփոխման մասին, որոնք կարող են էականորեն ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ապահովագրողը, տեղեկացվելով ռիսկի մեծացման մասին, իրավունք ունի փոփոխել Պայմանագրի պայմանները և պահանջել ռիսկի

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ պահանջել լուծել Պայմանագիրը: Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխմանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն գրավոր ծանուցելով այդ մասին Ապահովադիրին, որի դեպքում Ապահովադիրի կողմից վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման: Միաժամանակ Ապահովագրողն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետ կապված իրեն պատճառված վնասների փոխհատուցում:

9.4. Ապահովագրողն իրավունք չունի պահանջել միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե հանգամանքները, որոնք նպաստել են ռիսկի մեծացմանը, արդեն վերացել են:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ

10.1. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

10.1.1. Պայմանագրի կողմերի համաձայնությամբ,

10.1.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո,

10.1.3. Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն իր պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց հետո,

10.1.4. օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում, եթե տվյալ ապահովագրական ռիսկը, Ապահովադիրի համաձայնությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի փոխանցվում այլ ապահովագրական ընկերության,

10.1.5. օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

10.2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

10.3. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան տասնհինգ օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

10.4. Ապահովադիրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադիրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադիրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

10.5. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովագրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

10.6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովագրի (Ապահովագրված անձը, Շահառուն) տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. Ապահովագրին (Ապահովագրված անձն) իրավունք ունի՝

11.1.1. Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի պայմանների մասին,

11.1.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու և Ապահովագրողի կողմից որպես այդպիսին ճանաչվելու դեպքում ապահովագրական հատուցում ստանալ սահմանված ծավալով և կարգով՝ համաձայն Կանոնների և Պայմանագրի պահանջների,

11.1.3. Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով սահմանված դեպքերում,

11.1.4. Փոփոխություններ մտցնել այն գնահատող կամ փորձագետ անձանց ցուցակի մեջ, որոնք Պայմանագրով ունեն գնահատման կամ փորձագիտական գործունեության իրականացման իրավունք: Փոփոխություններ կատարելու համար Ապահովագրի պետք է գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին փոփոխությունների կատարման ենթադրվող ամսաթվից առնվազն մեկ օր առաջ:

11.1.5. Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,

11.1.6. Պայմանագիր կնքել իր ներկայացուցչի միջոցով, որն ունի պատշաճ ձևակերպված լիազորություն,

11.1.7. Ապահովագրողից պահանջել օրենքով, այլ իրավական ակտերով և Պայմանագրով նախատեսված այլ գործողությունների իրականացում:

11.2. Ապահովագրի (Ապահովագրված անձը) պարտավոր է՝

11.2.1. Ժամանակին մուծել ապահովագրավճարը, իսկ ապահովագրավճարի տարաժամկետ վճարումներ նախատեսված լինելու դեպքում՝ Պայմանագրով սահմանված չափերով և կարգով իրականացնել հերթական ապահովագրավճարի վճարումը:

11.2.2. գրավոր ծանուցել Ապահովագրողին այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել դիսկի աստիճանի փոփոխության՝ այդպիսի հանգամանքների ծագման մասին իր տեղեկացվելու պահից սկսած մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

11.2.3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

11.2.3.1. անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել վնասի կանխարգելման համար, այսինքն գործել այնպես, ինչպես կգործեր, եթե իր պատասխանատվությունն ապահովագրված չլիներ.

11.2.3.2. ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրում նշված կարգով և ժամկետում: Եթե Ապահովագրողին Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Պայմանագրով նշված կարգով կամ ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա.

11.2.3.3. Ապահովագրողին տրամադրել վնասների հատուցման համար Ապահովագրողին (Ապահովագրված անձին) ներկայացված հայցի կրկնօրինակը, տեղեկացնել Ապահովագրողին հասցված վնասների փաստի առթիվ համապատասխան մարմինների գործողությունների մասին՝ հետաքննություն, կանչ դատարան և այլն, ներկայացնել առկա նյութերը և փաստաթղթերը, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ (որոշում) կամ այլ իրավասու մարմնի որոշում, որով հիմնավորվում է վնասի համար պատասխանատու անձի վնասի հատուցման պարտավորությունը և որոնք անհրաժեշտ են Պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու համար.

11.2.4. պահպանել գնահատման գործունեությունը լիցենզավորող իրավասու մարմինների և մասնագիտացված միությունների կողմից սահմանված պայմանագրի անհրաժեշտ պահանջները և կանոնները և առաջնորդվել դրանցով.

11.2.5. անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին իր գործունեության բնույթի մեջ ցանկացած տեսակի փոփոխություններ մտցնելու մասին, եթե դրանք կարող են ազդել ապահովագրական ռիսկերի մեծացման վրա.

11.2.6. իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով և Կանոններով նախատեսված այլ գործողություններ:

11.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

11.3.1. ծանուցել Ապահովագրողին Պայմանագրի անվավերության մասին, եթե Պայմանագրի կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովագրողը դիտավորյալ հայտնել է ոչ հավաստի տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և հնարավոր վնասների մեծության վրա: Էական են համարվում այն հանգամանքները, որոնք որոշված են Պայմանագրով կամ նշված են Ապահովագրողի կողմից Ապահովագրողին ներկայացված գրավոր հայտի մեջ.

11.3.2. իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք համարում է անհրաժեշտ վնասների նվազեցման համար, պաշտպանել Ապահովագրողի իրավունքները, կատարել վնասների կարգավորմանն ուղղված գործողություններ.

11.3.3. մերժել Ապահովագրողի (Ապահովագրված անձի, Շահառուի) դիմումի հիման վրա ապահովագրական հատուցման վճարումը, եթե դիմողը չի կատարել Կանոններով, Պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված իր որևէ պարտավորություն.

11.3.4. իրականացնել Ապահովագրողի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղղորդման նպատակներով.

11.3.5. Ապահովագրողից պահանջել կատարել օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող այլ գործողություններ:

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

11.4. Ապահովագրողը պարտավոր է՝

11.4.1. Ապահովադիրին (Ապահովագրված անձին) ծանոթացնել ապահովագրության պայմանների հետ և Պայմանագրի կնքման ժամանակ հանձնել դրանք Ապահովադիրին (Ապահովագրված անձին)։

11.4.2. չիրապարակել Ապահովադիր (Ապահովագրված անձի) կամ այլ անձանց առողջական վիճակի և նրանց գույքային դրության մասին տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի։

11.4.3. ուսումնասիրել Ապահովադիր կողմից ներկայացված փաստաթղթերը և օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Ապահովադիրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում վճարելու կամ մերժելու վերաբերյալ որոշում։

11.4.4. ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ համապատասխան որոշման ընդունման դեպքում օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Շահառուին տալ ապահովագրական հատուցում։

11.4.5. պատշաճ կերպով կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները։

**ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

12.1. Պատասխանատու անձին վնասի հատուցում իրականացնելու պարտավորությունը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով կամ իրավասու մարմնի որոշմամբ հաստատվելու դեպքում Ապահովագրողը օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով, և Պայմանագրով սահմանված կարգով իրականացնում է ապահովագրական հատուցում Շահառուին կամ նրա օրինական ժառանգորդին։

12.2. Ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափի շրջանակներում՝ օրենքին, այլ իրավական ակտերին, Պայմանագրի պայմաններին և Կանոններին համապատասխան։

12.3. Ապահովագրողի համար ապահովագրական հատուցման գործընթացի սկիզբ է համարվում Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) գրավոր դիմումը (այսուհետ՝ հատուցման դիմում), որով Ապահովագրողը տեղեկացվում է, որ գնահատման կամ փորձագիտական գործունեության հետ կապված վնասի հատուցման պահանջ է ներկայացվել Ապահովադիր (Ապահովագրված անձի) նկատմամբ։

12.4. Ապահովագրական հատուցում իրականացնելու համար հիմք է հանդիսանում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ հաստատված պատասխանատու անձի (Ապահովագրված անձի) պատասխանատվության հանգամանքը՝ գնահատման կամ փորձաքննության արդյունքում պատճառված վնասի հատուցման մասով։

12.5. Հատուցում ստանալու համար դիմողը պարտավոր է ներկայացնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը հավաստող փաստաթղթեր՝ հատուցման դիմումը Ապահովագրողին ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, այդ թվում՝

12.5.1" պատահարի պատճառը և հանգամանքները հաստատող փաստաթղթեր՝

12.5.1.1. ապահովագրական պայմանագիր,

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

12.5.1.2. անկախ փորձագիտական եզրակացություն (առկայության դեպքում),

12.5.1.3. եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է դատական կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամ դրա պատճենը,

12.5.1.4. այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարը կարգավորելու համար, որոնց վերաբերյալ Ապահովագրողը գրավոր պահանջ է ներկայացրել, օրինակ՝ բուժհաստատություններից, բժշկաաշխատանքային փորձագիտական խորհրդի կողմից, սոցիալական ապահովության մարմիններից և այլն,

12.5.2" վնասի չափը հաստատող փաստաթղթեր՝

12.5.2.1. ֆինանսական փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ-տեղեկանք) և/կամ տեղեկանք՝ տրված օրենսդրությամբ սահմանված կարգով նման գործունեություն իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից, կամ

12.5.2.2. եզրակացություն կամ ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից.

12.5.2.3. առկայության դեպքում՝ կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկ՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից.

12.5.2.4. այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարը կարգավորելու համար, որոնց վերաբերյալ Ապահովագրողը գրավոր պահանջ է ներկայացրել, օրինակ հաշվի առնելով վնասի չափը հաստատող տեղեկանքները, հաշիվները և այլ փաստաթղթերը:

12.5.2.5. եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ ծախսն իրականացվել է դիմողի կողմից ինքնուրույն, ապա անհրաժեշտ է ներկայացնել կատարված ծախսը հիմնավորող ֆինանսական փաստաթղթեր.

- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր,
- դրամարկղի մուտքի օրդեր՝ կանխիկ վճարման դեպքում, կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում:

12.5.3" դիմողի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:

12.5.4" այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության որոշումն ընդունում է Ապահովագրողը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:

12.6. Եթե Բյուրոյի կանոնների համաձայն՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատված է համարվում ստուգիչ փորձաքննության արդյունքների հիման վրա կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ապա դիմողի կողմից ներկայացվում են բացառապես ստուգիչ փորձաքննության արդյունքները կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (ըստ կիրառելիության), և պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերը:

12.7. Կետ 12.5-ում սահմանված ժամկետում դիմողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ՝ սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է հատուցման դիմումի հիման վրա դիմողին ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

12.8. Այն դեպքում, երբ դիմողը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ժամկետը երկարացնելու մասին, Ապահովագրողը՝ ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում դիմողի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

12.9. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

12.10. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմիններ, կազմակերպություններին կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

12.11. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ վնասի չափի որոշման համար նշանակել իր ներկայացուցչին: Տարածայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետների կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող կողմի հաշվին:

12.12. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է պատճառված վնասների մեծությամբ, որի համար կարող է հիմք ընդունվել դատարանի վճռով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ հիմնավորված և հաստատված վնասի չափը, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափերը:

12.13. Ապահովագրական հատուցման վերջնական գումարից մասհանվում է Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը:

12.14. Եթե Պայմանագրով սահմանված է չհատուցվող գումար և մեկ ապահովագրական պատահարով հասցվել են մի քանի վնասներ, ապա չհատուցվող գումարը կիրառվում է մեկ անգամ:

12.15. Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների հանրագումարները չեն կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

12.16. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարզվում է, որ Ապահովագրված անձի՝ գնահատողի կամ փորձագետի պատասխանատվությունն ապահովագրված է մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում Ապահովագրված անձի ունեցած բոլոր Պայմանագրերի ապահովագրական գումարների հանրագումարում իր հետ կնքված Պայմանագրին համամասնորեն, սակայն ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված մեկ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական գումարի ենթաչափը:

12.17. Պատճառված վնասները (իրական վնաս և բաց թողնված շահույթ), որոնք ենթակա են ապահովագրական հատուցման կարող են ներառել նաև՝

12.13.1. գույքի գնի իջեցման (բարձրացման) հետևանքով թերագնահատման (գերագնահատման) պատճառած վնասը,

12.13.2. գույքի գնի իջեցման պատճառով վնաս կրած անձի չվճարած գույքային հարկի գումարը, որը որոշվում է հարկային մարմինների ստուգման արդյունքներով,

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

12.13.3. վնաս կրած անձի բաց թողած շահույթը, որը որոշվում է գույքի գերագնահատման հետևանքով վճարված հարկի մեծության չափով և որը վճարվել է հարկի վճարման պահից մինչև գերավճարած մասի փոխանցման պահը ընկած ժամանակահատվածում:

12.18. Ապահովագրողը՝ հատուցման դիմումը և օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին որոշում: Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով տրամադրում է դիմողին՝ նրան անձամբ հանձնելու միջոցով կամ նրա հասցեով փոստային առաքմամբ: Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է դիմողին՝ նրա մշտական բնակության հասցեով:

12.19. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

12.20. Եթե Պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարում և ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարը մուծելը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցումից մասհանել չվճարված ապահովագրավճարի մասը:

12.21. Ապահովագրողը մերժում է հատուցման դիմումի հիման վրա ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

12.17.1. պատասխանատու անձի վնասի հատուցման պարտավորությունը հաստատված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ.

12.17.2. Դիմողը, այն պահից, երբ իրեն հայտնի է դարձել ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, չի հայտնել Ապահովագրողին Կանոններով և, Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, և եթե չի ապացուցվում, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է դրա մասին կամ Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել Ապահովագրողի ապահովագրական հատուցման վճարման պարտավորության կատարման վրա.

12.17.3. Ապահովագրված անձը կամ Շահառուն, կանխամտածված կերպով, չի ձեռնարկել կորուստները նվազեցնելու համար անհրաժեշտ ողջամիտ և իր համար մատչելի միջոցներ:

12.22. Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման վճարումից, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) դիտավորյալ կամ կանխամտածված գործողությունների հետևանքով:

12.23. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

ԲԱԺԻՆ 13. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

13.1. Կանոնների համաձայն չեն հատուցվում այն վնասները, որոնք արդյունք են՝

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

13.1.1. երկու տարբեր գնահատողների կամ փորձագետների կողմից միևնույն անշարժ գույքի, միևնույն ժամանակահատվածում (որի ընթացքում տվյալ գնահատման օբյեկտի շուկայում գների էական փոփոխություններ տեղի չեն ունեցել), գնահատման կամ փորձագիտության եզրակացության արդյունքում ձևավորված (հաշվարկված) արժեքների միջև թույլատրելի շեղման, որը Կանոնների համաձայն չի կարող գերազանցել գույքի առավելագույն արժեքի 20 %-ը.

13.1.2. Ապահովագրի և Շահառուի կանխամտածված (միտումնավոր կամ դիտավորյալ) գործողությունների, որոնք հանգեցրել են ապահովագրական պատահարի, ինչպես նաև այն գործողությունների, որոնք արդյունք են Ապահովագրված անձի և Շահառուի չարամիտ համաձայնության.

13.1.3. Գնահատման կամ փորձաքննության այն պայմանագրերով ստանձնած պարտավորությունների Կանոններով նախատեսված խախտման, որոնցում որպես գնահատողներ կամ փորձագետներ Ապահովագրված անձից բացի ներգրավված են նաև այլ գնահատողներ կամ փորձագետներ, որոնք նախատեսված չեն Պայմանագրում.

13.1.4. Կանոններում նշված օբյեկտների գնահատման կամ փորձաքննության հետ կապված վնասի առաջացման, որը հետևանք է գնահատողի կամ փորձագետի անաշատության դրսևորման.

13.1.5. Ապահովագրված անձի կողմից գնահատման կամ փորձաքննության պայմանագրով ամրագրված պարտավորություններից միակողմանի հրաժարման, եթե Ապահովագրված անձի կողմից գնահատման կամ փորձաքննության պայմանագրից միակողմանի հրաժարվելը պայմանավորված չէ Ապահովագրված անձի հետ գնահատման կամ փորձաքննության պայմանագիր կնքած հաճախորդի կողմից պայմանագրով ամրագրված պարտավորությունների (անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովում և այլն) խախտմամբ.

13.1.6. Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ ճառագայթման ներգործության.

13.1.7. Ռազմական գործողությունների, այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմների, գործադուլների, ամեն տեսակ քաղաքացիական հուզումների, բռնագրավման, առգրավման, ռեկվիզիցիայի, կալանքի կամ պետական մարմինների կարգադրությամբ գնահատման կամ փորձաքննության համար օգտագործված նյութերի ոչնչացման հետևանքով վնասի.

13.1.8. Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

ԲԱԺԻՆ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

14.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան Ապահովագիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովագիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Ապահովագրված անձին և Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողն ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

14.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ծայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

14.3. Կետ 14.1-ում նշված Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական կամ այլ իրավասու մարմնի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

14.4. Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր

ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

14.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովագիրը (Ապահովագրված անձը) հավաստում է, որ տեղեկացված է՝ 14.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալներն օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովագիրը (Ապահովագրված անձը) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

15.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

15.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

ԲԱԺԻՆ 16. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.1. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի կողմերից ոչ մեկն իրավունք չունի Կանոններով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ կողմի, առանց Պայմանագրի մյուս Կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ Ապահովագրողի կողմից վերաապահովագրական գործառնություններից:

16.2. Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից հայտնված տվյալների ճշտության համար և պարտավորվում են տեղեկացնել միմյանց այդ տվյալներում կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին:

16.3. Կանոններով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

16.4. Բոլոր հայցերը և դիմումները, որոնք Պայմանագրի կողմերն ուղղում են իրար, պետք է իրականացվեն գրավոր ձևով:

16.5. Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: